ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«09» «հունիսի» 2020թ. № 171-Ա

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների փաստացի վիճակի, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությունների պայմանների կատարման ուսումնասիրության նպատակով:
2. Հաստատել միջգերատեսչական աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝
   ա) ապահովել Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների փաստացի վիճակի, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությունների պայմանների կատարման ուսումնասիրման աշխատանքները,
   բ) աշխատանքներն ավարտել 40-օրյա ժամկետում՝ չհաշված Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի ժամանակահատվածը,
   գ) աշխատանքներն ավարտելուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

09/06/2020

X

ՎԱՀԵ ՋԻԼԱՎՅԱՆ

Signed by: JILAVYAN VAHE 4101750076

«09» հունիս 2020թ.
ք. Երևան